# ԶՕՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՆՔԻՑ

## THE BAPTISM IN THE HOLY SPIRIT

### ԳՈՐԾ. 1:5,8

---

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Գործք Առաքելոցն ունի 28 գլուխ և Աստված 32 անգամ տարբեր միջոցներով խոսացել է տարբեր անհատների և մարդկանց հետ:**

## ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.

8 **այլ երբ Սուրբ Հոգին իջնի ձեր վրա, զօրություն պիտի առնէք եւ ինձ վկաներ պիտի լինէք Երուսաղէմում, ամբողջ Հրէաստանում ու Սամարիայում եւ մինչեւ երկրի ծայրերը:**

## ԳՈՐԾ. 1:5,8

### Քրիստոսի Խոստումը

որովհետեւ Հովհաննէսը մկրտեց ջրով, բայց դուք այս օրերից ոչ շատ հետո պիտի մկրտուէք Սուրբ Հոգով:

8 Երբ Սուրբ Հոգին իջնի ձեր վրա, **զօրություն պիտի առնէք** եւ ինձ վկաներ պիտի լինէք Երուսաղէմում, ամբողջ Հրէաստանում ու Սամարիայում եւ մինչեւ երկրի ծայրերը:

**Մար. 16:17-18 -** 17 Սրանք են **նշանները,** որոնք պիտի ուղեկցեն նրանց, որոնք հավատում են.

1. իմ անունով դեվեր պիտի հանեն,
2. լեզուներ պիտի խօսեն,
3. 18 իրենց ձեռքերին օձեր պիտի բռնեն, եւ եթէ մահացու թոյն խմեն, դա նրանց չպիտի վնասի.
4. հիվանդների վրա ձեռք պիտի դնեն եւ բժշկեն: 19 Եւ ինքը Տէր Յիսուս, նրանց հետ խօսելուց հետո, դէպի երկինք վերացավ եւ նստեց Հօր աջ կողմը:

## ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

### I. Սուրբ Հոգու Մկրտությունը

**Գործ. 2:1-4 -** 1 Եւ երբոր Պենտէկոստէի օրերը լրացան, ամենքը միաբան մէկտեղ էին: 2 Եւ հանկարծակի երկնքից մի հնչիւն եղաւ՝ սաստիկ փչող քամու պէս, եւ լցրեց բոլոր տունը՝ ուր նստած էին: 3 Եւ նրանց երեւացին բաժանուած լեզուներ, նման բոցեղէն լեզուների, որոնք եւ նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա. 4 Եւ **բոլորը** լցուեցին Սուրբ Հոգով ու <u>սկսեցին խօսել</u> ուրիշ լեզուներով, ինչպէս որ Սուրբ Հոգին նրանց <u>խօսել էր տալիս</u>: Peter walk on water. Staying on top of the water is miricle.

**Ի՞նչպես կարող ենք մկրտվել կամ կրկին լցվել Սուրբ Հոգով**
**How to be baptized and filled with the Holy Spirit**
**Գործ. 2:37-39**

1. 37 Այս լսելով՝ ներկաները **զղջացին** իրենց սրտերում եւ ասացին Պետրոսին եւ միւս առաքեալներին. «Ի՞նչ պիտի անենք, եղբայրնե՛ր» 38 Պետրոսը նրանց ասաց. **Ապաշխարեցէ՛ք,** եւ ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, եւ պիտի ընդունէք Սուրբ Հոգու **պարգեւը.**
2. 39 որովհետեւ **խոստումը** ձեզ համար է, ձեր որդիների եւ բոլոր հեռաւորների համար, որոնց կը կանչի մեր Տէր Աստուածը:

### II. Սուրբ Հոգու մկրտությունը մեզ պատրաստում է Քրիստոսի գալու օրվան:

**Prepare a people for the Lord's coming**

**1 Կոր. 1:3-9 -** 3 Շնորհք լինի ձեզ հետ եւ խաղաղութիւն Աստուած մեր Հօրից՝ եւ Տէր Յիսուս Քրիստոսից: 4 Ամեն ժամանակ գոհանում եմ իմ Աստուածանից ձեր մասին, Աստուծո այն **շնորհքի (Charis)** համար՝ որ տրուած է ձեզ Քրսիտոս Յիսուսում. 5 Որ ամեն բանի մէջ հարստացաք նորանով՝ ամեն խօսքով եւ ամեն գիտութիւնով: 6 Ինչպէս Քրիստոսի վկայութիւնն իսկ հաստատուեց ձեր մէջ:
7 Որ դուք չպակասեք ոչ մի **շնորհից՝ (պարգևից, Charisma)** սպասելով մեր Տէր Յիսուս Քրիստոսի հայտնությանը. 8 Նա, որ հաստատ կը պահի ձեզ մինչեւ վախճանը, անարատ՝ մինչեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալու օրը:

## III. Եվ այսպես, Հոգեւոր պարգեւների համար պետք է նախանձավոր լինենք:
## Eagerly desire the gifts of the Spirit.

**1 Կոր. 14:1-2 -** 1 Սիրո հետամո՛ւտ եղէք եւ առավել եւս հոգեւոր պարգեւներին
նախանձավոր եղէք, մանաւանդ մարգարէություն անելու. 2 որովհետեւ, ով որ
լեզուներ է խօսում, մարդկանց հետ չի խօսում, այլ՝ Աստծու հետ. քանզի չկա
մէկը, որ հասկանա իրեն, բայց նա Հոգով արտահայտում է խորհուրդներ:

4 Ով լեզուներ է խօսում, ինքն իրեն է **հաստատում,** իսկ ով մարգարէանում է,
ամրացնում է եկեղեցի՛ն:

## IV. Ի՞նչ է Մեկ տեղ հավաքվելու նպատակը:
## What is the purpose of gathering together in one place?

**1 Կոր. 14:26 -** 26 Եւ արդ, ի՞նչ անել, եղբայրնե՛ր. երբ որ մէկտեղ ժողովեք, ձեզանից ամեն մէկը

1. սաղմոս ունի,
2. վարդապետութիւն ունի,
3. հայտնություն ունի,
4. լեզու ունի,
5. թարգմանութիւն ունի. ամենը շինութեան համար լինի: